Ձևաչափ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարության Հավելված 2-ով սահմանված 2022-2023թթ. չկատարված (մասնակի կատարված) միջոցառումների վերաբերյալ

Ծրագրի հերթական համարը	Գործողությունների/ միջոցառումների անվանումները և կատարման ժամկետները	Գործողությունների/միջոցառումների չկատարման (մասնակի կատարման), այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Չկատարված (մասնակի կատարված) միջոցառումների կատարման կանխատեսվող ժամկետ
1	2	3	4
1.	**Նպատակ 4., Խնդիր 2.,** **Գործողություն 2.1.** Արհմիությունների կոնֆեդերացիայի և ճյուղային արհմիությունների ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում	Ներկայում ընթացքի մեջ են «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխությունների իրականացման աշխատանքները: «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխությունների նախագծի շրջանակներում մասնավորապես նախատեսվում է ընդլայնել արհեստակցական միությունների գործիքակազմը, ինչպես նաև «Արհեստակցական միությունների մասին» օրենքի կարգավորումները համապատասխանեցնել ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին: Հաշվի առնելով, որ «Արհեստակցական միությունների մասին» օրենքում նախատեսվում են էական փոփոխություններ՝ նշված 2.1, 2.3 և 2.4 գործողությունները 2022-2023 թվականների ժամանակահատվածում չեն իրականացվել:	Նախորդ սյունակում ներկայացված տեղեկատվությամբ պայմանավորված՝ 2.1, 2.3 և 2.4 գործողությունների ուղղությամբ աշխատանքները առավել նպատակահարմար է իրականացնել «Արհեստակցական միությունների մասին» օրենքում հիշյալ փոփոխությունների ընդունումից հետո:
2.	**Նպատակ 4., Խնդիր 2.,** **Գործողություն 2.3.** Արհմիությունների կոնֆեդերացիայի և ճյուղային արհմիությունների կարողությունների զարգացում		
3.	**Նպատակ 4., Խնդիր 2.,** **Գործողություն 2.4.** Արհմիութենական շարժումը խթանող միջոցառումների իրականացում		
4.	**Նպատակ 4., Խնդիր 3.,** **Գործողություն 3.2.** Աշխատանքային պայմանագրերի գեներացման առցանց համակարգի ստեղծում	Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգի (այսուհետև՝ Թվային համակարգ) ներդրման ծրագիրը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2022 թ. հոկտեմբերի 6-ի ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1568-Լ որոշմամբ հաստատված «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագրով (ըստ պարտավորության՝ ՀՀ կառավարությունը 2024	Առաջիկայում նախատեսվում է տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի նիստի օրակարգում ներառել Թվային համակարգի ներդրման հարցը, որից հետո փաթեթի վերջնական տարբերակը կներկայացվի վարչապետի աշխատակազմ:

		թվականին պետք է ներդնի «Աշխատանքային պայմանագրերի հաշվառման և կնքման թվային համակարգ»՝ պետական և մասնավոր հատվածի համար): Նշված շրջանակներում մշակվել և շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի ընդունմամբ ակնկալվում է թվային համակարգի ներդրման միջոցով թվայնացնել Հայաստանի Հանրապետությունում թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածում կնքվող աշխատանքային պայմանագրերը՝ աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության համակարգի բարելավման նպատակով: Թվային համակարգի առկայությունը մի կողմից հնարավորություն կտա Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին իրականացնել պատշաճ պետական վերահսկողություն (առավել թափանցիկ, հաշվետու և իրավունքահեն), ինչի արդյունքում աշխատողներն ու գործատուները հստակ պատկերացում կկազմեն, թե ինչ է ենթադրում աշխատանքային հարաբերությունների պաշտպանությունը, իսկ մյուս կողմից թվային համակարգը հնարավորություն կընձեռնի աշխատողներին ունենալու օրենսդրությամբ նախատեսված պահանջներին բավարարող աշխատանքային պայմանագրեր, աշխատողն ինքնուրույն կկարողանա հսկել իր աշխատանքային հարաբերություններից բխող իրավունքների պահպանված լինելու հանգամանքը և զերծ մնալ անօրինական աշխատանքում ներգրավվելու դեպքերից կամ շահագործումից:	